

Ս. Շուրկյան

ՄԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ «ԱԳԱՊԻ»-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Անցյալ դարի հիսունական թվականներին, երբ լույս տեսավ «Ագապի»-ն՝ հայ իրականության մեջ եռուն պայքար էր մղվում լուսավորչական և կաթոլիկ հայերի միջև։ Կաթոլիկական Պրոպագանդան լայնորեն տարածվում էր Մերձավոր արևելքում։ Ինչպես ճշտորեն բացահայտել է Նալբանդյանը, արտաքուստ կրոնական թվացող այդ քողի ներքո վատիկանը փաստորեն ջանում էր իր իշխանությունը տարածել ողջ աշխարհի վրա, հող պատրաստել եվրոպական դադութարարների համար։

Ահա թե ինչու այնքան կատաղի էր պայքարը կաթոլիկների ու լուսավորչականների միջև, ահա թե ինչու հայ առաջավոր մտքի ներկայացուցիչները հնարավոր ընդունեցին պայքար էին մղում կաթոլիկացման դեմ։

Բացի տարբեր երկրներ քարոզիչներ ուղարկելուց, Հռոմի Պրոպագանդան աշխուժ հետևում էր իրեն ենթակա երկրներում լույս տեսնող դրականություններին, որոնք եթե համապատասխանում էին կաթոլիկական ոգուն՝ խրախուսվում էին, իսկ եթե հակադրվում էին նրան, բանադրվում էին։ Հասկանալի է, որ այս պայմաններում լույս տեսած «Ագապի» վեպը չէր կարող վրիպել կաթոլիկ վատիկանի ամենատեսա աչքերից, որովհետև դիրքն ամրոցված լին ուղղված էր ընդդեմ պապականության։ Եվ, իրավ, գիրքը լույս տեսնելուց հաղիվ մեկ տարի անց, տեղեկանալով նրա մասին, Պրոպագանդան արդելում է այն, որպես «սրբազան հավատը վարկարեկող» գործի։ Ահա այդ որոշումը։

Վ Ճ Ի Ռ

Սուրբ հոգվմեական եւ Տիեզերական Սրբաբնություն ընդհանուր ժողովը, որը կայացաւ Սուրբ Աստուածածնայ վանքին մէջ, Վսեմ. և Գեր. Տէր Քարտինալին ներկայութեամբ, Պօլսէն տեղեկացուած ըլլալով հոն հրատարակուած երկու հավատընդդէմ դրքերու մասին, Սուրբ Ժողովը դատեց եւ հրատարակեց, որ արգիւն է և մերժուին։

Անանունի «Ագապիին պատմութիւնը» գիրքը և «Վարկարադիրն թուղթը» գիրքը, որպէս ուղղափառ հաւատին դէմ և սրբազան հաւատը վարկարեկող գործեր։

Հոռվմ, ի բլորականտա 1852 թ.<sup>1</sup>

Այս հետաքրքիր որոշումն ունի քննության արժանի մի քանի կետեր։ Թե ով է Պօլսում եղած կաթոլիկության գործակալը, որը «Սրբաբնության» ժողովին տեղյակ է պահել վերոհիշյալ գրքերի մասին, զժվար է ասել։ Այդ կարող էր լինել Անտոն Հասունյանը, կարող էին լինել այլ գործակալներ։ Գալով արգելված երկրորդ գրքին «Վարկարադիրն թղթին», ապա դրքի վերնագիրը թուրքերեն թարգմանելով կստանանք «Բոշ-րողադ բեսալեսի», այսինքն այն գիրքը, որի մասին այնպես դրական էր խոսում «Մեղու»-ն, գրելով «Մեր մեջը այնքան տարիքի վեր բարոյականի ուսուցիչ լրագիրները այնքան աղղեցություն չունեցան, որքան որ ունեցան դանի «Ագապի հիբեայեսի» և «Բոշրողադ բեսալեսի» ըսված հատորները»։

<sup>1</sup> Տե՛ս „Recti Propagandis“ (Պրոպագանդայի վճիռները) 4-րդ հատորի հայերեն հավելվածը, Հռոմ, 1880, էջ 512։

<sup>2</sup> «Ագապիի պատմությունը», Երևան, 1953, Առաջարան Գ. Ստեփանյանի, էջ 9։

Վերոհիշյալ երկու դրքերի արդելվելու հանդամանքը ծանոթ է եղել և Վենետիկի Մխիթարյաններին (եթե նրանց նախաձեռնությամբ չի կատարվել այդ արդելումը), որովհետև 1852 թ. ս. Ղազարում լույս տեսած մի դրքում արդեն որպես կատարված փաստ նշված է. «Աղապիին դիրքը, տարակոյս չիկայ, որ խոհեմութեան թելադրութեամբը արդելուեցաւ»<sup>1</sup>:

Եվ վերջապես ինչպես Հռոմի Պրոպագանդային, այնպես էլ վենետիկցիներին «Աղապի»-ի հեղինակը հայտնի չի եղել: Վեպի մասին խոսելիս նրանք հեղինակ չեն հիշատակում:

Ահա թե ինչու «Աղապի»-ն լույս տեսնելուց հետո թաղվում է անհայտության մեջ այնպես, որ նրան դտնելու համար լուրջ աշխատանք հարկավորվեց, իսկ «Վարկապարադիի թղթի», առայժմ միայն անունն է հայտնի:

Այսպիսով,

ա) «Աղապին» լույս տեսնելուց մի տարի անց, 1852 թ. այն արդելվում է «Սրբափննության ժողովի» կողմից:

բ) Գիրքն արդելվել է Պոլսից ուղարկված մատնադրի հիման վրա:

գ) Մխիթարյաններին հայտնի է եղել դրքի արդելման փաստը:

դ) Ինչպես Սուրբ Ժողովին, այնպես էլ Մխիթարյաններին հայտնի չի եղել «Աղապի»-ի հեղինակի անունը:

Կարծում ենք, որ այս պարզարանումները կարևոր են «Աղապի»-ի կապակցությամբ և կհետաքրքրեն նրանով զրադվողներին:

<sup>1</sup> «Վենետիկու Մխիթարեան անանուն պարսաւադրին դէմ», Վենետիկ, 1852, էջ 33: